

ԲԱՍԱՆՈՐՈՒԹԻՒՆ
 ոչկարիոյ համար
 Տարեկան 12 Յր.
 Վեցամսեայ 6 »
 Արսասանակի համար
 Տարեկան 15 »
 Վեցամսեայ 8 »
 Անկարիոյ համար
 Տարեկան 3 Տր.
 Վեցամսեայ 1.50 »
 ԿԱՆԻՍԻՆԱԿԱՆԻՒՆ
 Մանուգրան սրբապատկերներ
 երեսին համար 20 Կանիսին
 է. իսկ վերջին թիւի համար
 20 սանիւր Կանիսին
 աւելի անկարճեղ համար
 20 Օլո զեղը կըլլայ:

ՇԱՐՋՈՒՄ

R. P. Kalémecarian
 (Autriche)
 Mechitharistangasse W. 4
 Vienne

Պատկեր կը դրուի դրկեյ
 Խմբագրութեան հասցեին
 —
 Редакция на ввстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 —
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂԱԲԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԸՄԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՈՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Կրօնիւնիս կը յնն տրուի
 Արսասանակի համար ձեռքի
 (20 ՍԱՆԻՍԻՄ)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մեր բաժանորդներէն. որոնք վճարած չեն. կը խնդրենք անյայտալ զրկել բաժանորդները, որովհետեւ առաջին վեցամսեան կըլլանայ. Բաժանորդները պէտք է հասկնան որ թերթը ստակով կըլլայ:

Թ Ա Տ Ր Ո Ն

Յառաջիկայ շաբաթ զիշեր Յուլիս 1, տեղւոյ Սաէտինէնի սրահին մէջ հայ երիտասարդութիւնը իր կողմէ ներկայացում մը պիտի տայ ի նպաստ Հայաստանի սրբերու:

Ներկայացուելիք խաղն է «Արեւիկա կամ Առեւանգութեան մը զոհերը» որով 6 արար իրական կեանքէ առնուած եւ խիստ ծիծաղաշարժ զաւելչտ մէջ արար:

Հայ ներհասարդութիւն

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՈՐԲԵ Ը

Հայ որբերին օգնելը այնքան զեղեցիկ եւ մեծ գործ է որ գրա մասին խօսելն անգամ աւելորդ է. Ամէն մի հայ պարտական է օգնել հայ որբին, առանց կրօնի, հաւատքի, սեռի խտրութեան. մի միայն այնպիսի ձեւով եւ ճանապարհով որ իսկապէս հայ որբերը օգտվեն, բայց ոչ թէ որբերի անունով զանազան անհասուններ:

Մեր խեղճ որբիկները անունը շատ հարստահարեցին, աշխարհի ամէն կողմերում, թէ հայեր եւ թէ օտարներ. ինչպէս եւ հարստահարեցին մեր անօթիներին անունը: Ու հարստահարողները այնպիսի զիմակներ հաղան, որ միամիտ ամբոխը շատ անգամ չը հասկացաւ թէ այդ զանազան որբախնամ եւ անօթիխնամ անհասունները գործունէութեան մէջ մարդասիրական զղացմունքը շատ չնչին գեր է կատարում:

Այսօր Վառնայի թարմ երիտասարդութիւնը ուզում է իր ու-

մեր չափով օգնել հայ որբիկներին, ինչպէս ցոյց է տալիս այդ երիտասարդների այսօրայ յայտարարութիւնը: Շատ ուրախ ենք եւ լիովին հաւատում ենք որ այդ երիտասարդներին զրգողը միմիայն իրենց անօթի, անաէր փոքրիկ եղբայրներին օգնելու բնական տենչն է, բայց ոչ ուրիշ պատճառ:

Ի՞նչ կարող էին անել այդ երիտասարդները, եթէ ոչ մի ներկայացում տալ կամ դրանման մի բան անել. . . .

Մեզ ուրախացնող գլխաւոր երեւոյթը այն է, որ մեր գրեթէ պատանի երիտասարդները անտարբեր չեն գէպի հասարակական ցաւերը եւ տրամադիր են իրենց ձեռքի եկածը անելու զոնէ մասամբ ծառայել այդ աղէտները թեթեւացնելու գործին: Բայց հասարակութեան վրայ էլ այսպիսի զէպերում մեծ պարտականութիւն կայ: Հասարակութիւնը պարտաւոր է սուր արձագանք տալ երիտասարդների այս գործին, քաջալերել նրանց այս տեսակ ձեռնարկների մէջ, որպէս զի երիտասարդների մարդասիրութեան առաջին թափը չը կտրուի, եւ նրանք համոզուեն թէ իրենց գործած ամեն մի գաղափարական քայլը կատարեալ համակրութեան է արժանանում հայ ժողովրդի հասուն եւ խելացի անդամների կողմից եւ շարունակեն եռանդով ընթանալ գաղափարական ճանապարհով:

Ենչուում ենք, ամեն տեղ, ինչպէս մենք տեղականում ենք մեզ հասած նամակներից, հայ պատանի երիտասարդութիւնը մի առանցքին բորբոքման մէջ է օգտակար հանդիսանալու: մեր զըմաղը ժողովրդին. մի մասը յեղափոխութեան համար է աշխատում, միւրը սրբին եւ անօթիներին է ուզում օգնել. ոմանք ներկայացումներով, ոմանք վիճակախաղերով, ոմանք ամսօվճարներով: Եւ մեր հասարակութիւնը պարտաւոր է ամեն կերպ մեր ծաղկալիութիւններդի այդ եռանդը վառ պահել: Այդ սերունդը սնվել է մեր ժողովրդի կրած

վերջին ծանր հարուածներով, մեր արեան հեղեղներով. այդ սերունդն է մեր ժողովրդի ապագայ յոյսը եւ մենք ամեն ճիգ պէտք է թափենք որ նա գաղափարապէս ճիշտէր, հասարակութեան ցաւերով տանջվող մեծանայ, զօրանայ, որպէս զի ապագայում կարողանայ իր վճարական գերը կատարել մեր ճակատագրական պայքարի մէջ:

ԴԻՒԱՆԱԳԻՏԱՎԱՆ ԶԱԽԵՅՏԸ

Չին եւ ճարտնական պատերազմէն վերջ մանաւանդ ալ կը կարծուէր թէ Չինաստան չքացում մի մատնուած անկարող պիտի ըլլար փոքրիկ շարժում մը ընելու իր գրկային վիճակին մէջ ու արտանետան ազնուները շտապելով հոն սլացան որպէս զի անոր տարբազարուած դիակին նեկած միտերը կոտցեն:

Ահաւասիկ այդ Չինաստանն է որ այսօր դուրս կը բերէ «պօքստէն» կոտորածարակ անունով մը կըրտուած ապստամբ ու կառավարութեան իբր թէ անաստող վահակ մը որ վաղահառ վառագէն սահմրկած անարդար յարձակումի մը զէմ իր գոյութիւնը պաշտպանելու դիպացունական ջանքը ի գործ կը դնէ բացարձակ իրաւունքով:

Ի՞նչ կուզեն Չինաստանէն այդ զաւելչտի գերասան դիւանագէտները, այն երկրէն որ հազարներով տարիներ առաջ արգէն գիտցած ու գործադրած է ճշմարտ քաղաքակրթութեան մը ամեն պայմանները. ժողովրդէ մը որ պատասխան չքնաղ կրօնքի աղբեցութեան տակ կրցած է մարդասիրութիւնը հայրենասիրութեան ընկերացնել. վերջապէս 400 միլիոնի պատկառելի թիւը կազմող համայնքէ մը որ օտար արիւնով ծարաւ անցնելու խայտառակ բարբարոսութիւնը չէ ունեցած բրբէք:

Դիւանագիտութիւնը իր միմասկան նրբամտութեամբ արգարացնելու համար ապագային մէջ իր ընելիք անխառն տնձգութիւնները, կրօնաւորներու հեղեղ մը թափեց հոն ու այդ կրօնաւորներն էին որ ստեղծեցին այսօրուան չինական ահաւազի ու կործանիչ ապստամբութիւնը:

Այդ օտար կրօնաւորները ի՞նչ կուզէին սովրեցնել: Չինացիներ սակայն պէտք չունէր բնաւ օտար կրօնաւորներու օտարոտի խորհուրդներուն քանի որ կոմփիլիկոս ու Պուտաա շատ զարբեր առաջ ցուցուցած էին կեանքի մէջ քալելու համար ամենէն մաքուր եւ շոյն պոզոտաները սրտնց վրայ ոչ գահալէժը գոյութիւն ունի ոչ ալ առջինի ժայռը: Եթէ քրիստոնէութիւնը կրօնքներուն վսեմագոյնը նկատուած է պէտք է խոստովանիլ նաեւ թէ Պուտաա յակոնութիւնը իր մէջ կը պարունակէ զեղեցիկ ու վեհ սկզբունքներու ճոխ հաւաքածոյ մը:

Պատերազմելու մէջ ունեցած անյարմարութիւնը չինացիին համար ոճիր մը կը սեպուի շատերուն կողմէ բայց խեղճ կրօնաբեր երեւակայել թէ օր մը գաղաններով շրջապատուած գառագեղի մը մէջ պիտի նետուի:

Ուրեմն դիւանագիտութիւնը պարզապէս զաւելչտ մըն է ու դիւանագէտներն ալ անոր գերասանները:

Ասկից տարի մը առաջ Ֆրանսկառավարութիւնը ձերբակալելով Սենեկալ աքսորեց Սամօրի անուն ամբիկեցի ցեղապետ մը որովհետեւ շատ մը սպաննութիւններ ու կոտորածներ ըրած է եղբոր իր երկրին մէջ:

Հա՛ . . . հա՛ . . . կարելի չէ որ մարդ իր խնդուքը զսպէ այս տեսակ իսկապէս «թօհափ» կատակերգութեան մը առջեւ:

Սամօրի մը իր քանի մը տասնեակ սպաննութիւններով կը ձերբակալուի, կ'աքսորուի եւ վերջապէս կը մեռնի մինչդեռ անդին հարիւր հազար զոհերով վրայ նստած վայրագ գիշակերներուն ամենէն վտանգաւորը ե-

ըզդ համարը իր որչին մէջ հանգրտա կը մնայ ու իր լիբը ներկայացուցիչները կայսրերու, թագաւորներու, նախագահներու սեղանակից ըլլալու մեծ պատիւը կը վայելեն:

Գերմաններու մակարոյժ կայսրը չէ՞ր որ գեռ մօտ ժամանակի մէջ համարներով կը շոյէր այդ արիւնկազակ գազանը:

Է՞հ ալ փորձառու եղանք. գիււանագիտութիւն ըսուած զաւելտին ու գիււանագէտ ըսուած ձեռնոճներուն խաղալիք չ'ըլլանք մենք հայերս ալ ու միմիայն մենք գիււանք մեր ընելէքը մեզի համար օրէ օր սպառնացող սոսկալի վտանգին հանդէպ:

ՊԱՂԱԻ

Իգմբր, 15 Յունիս

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

4. ՊՈԼԻՍ, 23 Յունիս

Պայթեցաւ:

Կարմիր կնիքը և ստակի հանգանակութիւնը իրենց արդիւնքը տուին: Տողերս գրած պահուն 150 հոգի նոր ձերբակալուածներ լեցուած են Պօլսոյ բանտերու մէջ: Երէկ հինգ հոգի բնիկ Պօլսեցիներ Պարպ Թարապուլզ արտօրուեցան, իսկ 40է աւելի Ռոտտսթոյիններ քշուեցան իրենց ծննդավայրը: Կառավարութիւնը արտակարգ բարկութիւն մը կը ցուցնէ Ռոտտսթոյիններու դէմ:

Հանելուկ մը կայ անշուշտ:

Գէթ կարմիր կնիքը ասպարէզ հանդերձը շահ մը քստեսած ըլլալին նորէն միմիայնութեամբ մըն էր: Իմամներն ու սպառնալիքները ոչ մէկ արդիւնք ունեցան. և ոչ մէկ դահեկան կրցին առնել: . . . ու այժմ ամէնքը վտանգի մէջ են:

Կառավարութիւնը և լրտեսները ամէն ծակ ընկած մէկ անձ մը կը փնտռեն. Հնչակեաններու նախկին պետերէն մին, որ բաժնուեր է անոնցմէ և հոս է եկեր:

Ատ անձի անունը կայ ամէն լըրտեսի քով (Չ. Բ.) յայտնի է որ տեղացի ըլլալը և անցեալ կեանքը: Իր ընկերները կը վկայեն որ մատնութիւն կայ գործին մէջը: Բայց մատնութիւնը ասկէ չէ, մատնողը հոս չէ՛, աս ալ ինծի համար արեւու պէս պարզ է: Եթէ հոս ըլլար, անշուշտ լրտեսի մը կը ցուցնէր ատ սրտնուած անձը: Բայց լրտեսները ամէն ինչ գիտեն ատ անձի մասին, միայն դէմքը չեն ճանչնար:

Հանելուկ. ո՞վ է զուրտէն մատներ ատշափ ճշգրտութեամբ մեր խելճ բարեկամը. . . պատասխանը դուք մտածեցէք, դուք, ատ մատնուած ընկերներէն էն անկեղծներդ ու աղնիւներդ:

Ու Իեռ եւս կըսենք թէ Համիտ անխելք է: Տեսաք, ինչպէս օգտուեցաւ քանի մը Հնչին գիւմաշներէ և հայերը ճգմել ս'սեց: Հայերուն իրը թէ բարիք ընել ուղղուա զեպպանի համար ալ պատրաստի պատասխան մը ստեղծեց. . .

Եղբայր, տանջուինք, բանտարկուինք, արտօրուինք. . . բայց գէթ գործ մը ընենք, յեղափոխական քայլ մը ընենք ու այնպէս միայն տանջուինք՝ ցաւս չի գար: Բայց հիմակ սիրտս կը ցաւի որ ոչինչ ըրած կը հալինք ու կը մաշինք Համիտի հարուածներէն:

Բանտարկուածներու մէջ է և զուրտէն եկած, ներսմով ազատուած նախկին գործիչ մը, որ կուզէր անկէ անցնել, հայրենիք երթալ:

Պահա պէյ Ատանայէն հոս է եկեր. Ուրնմն Պահրի մինակ մնաց Կիլիկիոյ ընտրութիւնը խանգարելու համար: Պահա պէյ սաստիկ հիւանդ է և կիսա-ստտկած շունչը հոս առաւ: Տառօք Պահրի փաշային ըլլայ. . . Կիլիկիացիք թերեւ՝ քիչ մը հանգստանային:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Վ Ա Ն

ՄՇՈՅ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՑԻՆԵՐ
ՊԱՏԵՐԱԶՄԷՆ ՅԵՏՈՅ, ՈՒ
ՅԵՆԱՓՈՒՈՒԹԵԱՆ ՄԱԳՈՒՄ

Ինչպէս որ Մշոյ դաշտը անխնայանութեան մատնուած, նոյնպէս ալ հայոց առաջնորդարանը բոլորովին իր ազդեցութիւնը կորսնցուցած էր, այլևս իր բողոքի ձայները չէին լսուեր: Յիւր ներսէս Մ. վարդապետ ինքնաբերական և բողոքագրով չ'զիմուեմեր ըրաւ, գործուած գազանութեանց մասին մատնանիչ ընելով և գալիք աղետալի հետև-

անքնները ցոյց տալով, բայց աւա՞ղ որ այդ ներկայացուած բողոքներու շարքն, Պատրիարքարանի առջև նշանակութիւն մը չունեցաւ, որով ինզճ ինքնաբերական յոյսը ամէն տեղէ կտրած՝ գո'նէ գալիք ծանր պատասխանատուութիւնէ Մշոյ դաշտը աղատելու համար միջոցներ ձեռք առաւ. այսինքն՝ ամէն օր և ամէն վայրկեան ի'նչ զէպք որ պատահելու ըլլայ գիւղերու մէջ օրակարգի անցունել ամսանամարով: Այդ մասին ինքնաբերական և քաղաքական ժողովը երկար խորհելէ ու խորհրդակցելէ յետոյ, Մշոյ դաշտի ամէն հայ գիւղերը պաշտօնապէս սեղեկութիւն տրուեցաւ սա ձևով թէ՛ «այսօր մահուան ճգնաժամի առաջը կը գտնուինք. ասկէց ալ աւելի աղետալի պիտի տեսնենք, եթէ լըջօրէն և հետատեւութեամբ չը վարուինք. ահա՛ պաշտօնապէս ձեզ կը գրենք, այժմեան անտանելի դրութեան մասին: Պա-

Գաւառներէն եկած լուրերը օր աւուր աւելի սրտաճմլիկ կը ըլլան: Չէյթուէն լուր եկաւ որ Ուլնիոյ գիւղերէն միոյն բնակիչները հացի պակասութեան պատճառաւ սարերու սունկերով են սկսեր կերակուել և արգէն եօթը հոգի թունաւորուեր մեռեր են: Նպաստից յանձնաժողովը կուզէ օգնութեան հասնիլ: Անաստուի ամէն գաւառներէն, նոյնիսկ Մակեդոնիայէն սովի ու ծայր աղքատութեան ձայները երկինք կը ըլլան, իսկ Համիտ՝ փառամոլական ախաթն ընտուած՝ Արապիոյ անապատներու մէջ երեւակայական երկաթուղի մը շինելու համար իր ռոճիկէն 50,000 ու՛՛՛ի կը նուիրէ (իրմէ ի'նչ կը պակսի) և մէկ միլիօն ոսկիի ալ նուիրատուութեան տոմսեր շրջաբերութեան կը հանէ, 5—10 մէճիտիէ և 5—10 ոսկինոց երկու շարքերով: Թէ հոս և թէ գաւառները քոմիսիօններ են կազմուեր: Ու վա՛յ աղքատ ժողովուրդին: Կամաւոր նուիրատուութիւնը բռնի, աւազակային պահանջի պիտի յանգի: Ուտելու հաց չունեցողը առնուազն 5—10 մէճիտիէ պիտի «նուիրէ» . . . սրպէտը Սուլթանի ու իր գրանիկներու օրկորը լեցուի:

Թուրք զինուորները նորէն յանդգնութեան կը դիմեն, եւրօպացիներու դէմ: Ասկէ ամիս մը առաջ՝ Սպանիական զեպպան Գամպուս Կրասօ Սուլթանի քարտուղար Փանճրի պէյին կնիք հետ կառքով գացեր էին քեւասահանէ՞ պտոյտի: 4—5 զինուորներ վրանին կը յարձակին, զեպպանը ծառէ մը կը կապեն ու տիկին-պէյը կը բռնաբարեն, եւրօպացիներին ու՛՛ գրամներնին կառնեն ու կը կորչին: Անցեալ օր գերմանացի դրամատէրերն ներկայացուցիչ մը թալլեցին, զեպպաններու ամառանոցին քովերը, որ գերման թարգմանի հետ կառքով պտոյտի ելած էր Թարապիոյ ծառուղիներուն մէջ: Աւազակները մէկ

թուրք սպայ մը ու երկու զինուորներ էին:

Երաւըը քանի մը անգամ գաղտնի տեղեկագիր կը ստանայ Մշոյ կողմերէն: Սերոբի հերոսական գլուխը ցցեցին խաղրխին ծայրը և ի ցոյց դրին. բայց սարսափի հակառակ արգիւնք մը ծնեցաւ, Սպիւրի քաղրկերներէն մին Անդրանիկ, այժմ բռներ է Սերոբի տեղը:

Կառավարութեան գաղտնի դրութիւնները կըսեն որ Անգրանիկ սովորական ժամանակ մինչև 60 հոգի ունի իր հրամանին տակ: ամենքն ալ լաւ գիւնուած, իսկ գժուարին պարագաներուն անոնց թիւը կը հասցնէ մինչև 200—250 հոգիի:

Միամիտներ. . . Սերոբ մեռցնելով կարծեցիք թէ պիտի մեռցնէք աղատութեան ձգտող մը հայու մէջ: Ամէն կախաղանէ ճօճացող Արամ Արամեան, ամէն «մարտի» զարնուած Սերոբի զլուխ կը ծնեցնեն նոր Արամներ ու նոր Սերոբներ տառնեակներով: Արամ, Պետօ, Սերոբ ծնունդ են Թուրքիոյ մէջ տիրող գժոխային պայմաններու և հայու ազատութեան ձգտման, քանի ատ պայմաններն ու ատ ձգտումը կայ՝ մէկ մեռնողը 10 նոր կարտադրէ լոկ իր արեան կաթիլներէն:

ԲԱԺ

Թ. ԲԱՉԱՐՃԳԻ

Հեռագիր պատճենը Պիտիքի միջոցով պակսի և «Թրաւուր»-ին:

21 Յունիս. «Թրաւուր»-ի հակառակ այսօր կատարուեցաւ թաղական ինքնօրգի ընտրութիւնը ըստ Ազգային Սահմանադրութեան օրինաց. ամենայն օրինաւորութեամբ: (*)

Ի զիմաց ընտրողական ժողովոյ Ատենապետ՝ Մ. ԿԱԶԱԶԱՆ

(*) Արգէն աս բաւական է. Իբրաւունքի խմբագրին հասկնալու թէ ի՞նչ է ճշմարտութիւնը, եթէ միայն նա զիմէ այդ խօսքին նշանակութիւնը: Այլևս միւս նամակները սպառնալիք աւելորդ կը համարենք: Մ. Խ.

և այսպիսով 40 օրուան մէջ Աշոյ դաշտի ամէն մէկ գէպքը՝ իր մասնաբաժնով և անխնայաբար ստանալով, օրակարգի անցնելով արձանագրեց:

Իսկ միւս կողմէն, Չէքի անմիջային արձակուած հրամանները հետզհետէ գործադրուելով դուրս եկան և 25 օր անցնելէն յետոյ սկսան գուետ գուետ զինուորներ Մշոյ դաշտը լեցուիլ. այնքան հասկնալով այդ հրամանը առաջ տարած էին, որ մինչև անձամ կեղով զինուորներու երկը մաք առանց զինուորական հագուստի և զէնքի էին զրկուած, որպէս զի օր առաջ Մուշ հասնելով, այդ իրենց զինուորութեան վերաբերեալ պատասխանութիւն ընէին:

Մինչև 36 աւուր մէջ Մուշը 40000 նորիկ զինուորներով լեցուեցաւ. իսկ 40 աւուր վրայ եկաւ Չէքի իր թիկնապահներով և վաշտ մը զօրքով: Մշոյ աշխարհը արեան ծովի մէջ լա՛ւ

ՀԱՍԵՐԱՇԽՈՒԹԻՒՆ (ՍՈՒՍՈՒՄՅՄ)

Բարիքի արուեստաճանդէսը վաղուց լայնացած է. այդ համաշխարհային քաղաքին մէջ, Սէնի երկու ակերուն վրայ հիմայ դարուս քաղաքակրթութիւնը, արհեստներն ու գիտութիւնները խտացած, կեդրոնացած են եւ աշխարհին շորս կողմերէն ամէն ցեղէ, բայց ոչ ամէն պատկարգէ կազմուած գունապնդ ամբոխ մը հոն կը դիմէ: Կողովը Բարիքը շեմեմանդ ուխտագնացի մը փութկոտութեամբ, բայց գիտութեանց այդ սուրբներու այնցելունքը միայն թեթեւամիտ գութարձակները չեն. կան նաեւ հմուտ մասնագէտներ եւ արհեստաւորներ: Իրաւապէտներ եւ ընկերաբանները գրագէտներ եւ երկրագործներ որոնք հոն կը դիմեն իրենց արհեստին: Վերաբերեալ գաղտնիք մը կորցելու, զէրենք դրազեցնող գիտական եւ ընկերական հարցերու պատասխան մը, լուծում մը գտնելու համար, եւ ատենց մէջ ուսուցիչներ, մանկավարժներ ալ կան որոնք ինքնաբերաբար, կամ իրենց կոտորակաբար թիւններէն ուղարկուելով կերթան հոն որպէս զի մանուկներու դաստիարակութեան, ազգի մը արագաշարի պատրաստութեան շատ բարդ, շատ հրատապ եւ շատ պատասխանատու հարցերը ուսումնասիրեն, կրթական սխալներու նոր կատարելագործութիւնները իւրացնեն:

Այդ ընդհանուր կոչուածքն անմասն կը մնայ միայն խեղճ հայ վարժապետը, ազգերու ուսուցիչներուն մէջ իրեն արուած պայմաններով թերեւս ամենէն վատակամարտ եւ ամենէն ալ թշուար, որովհետեւ աէր չունի, կոտորակութիւն չունի: Բայց ատիկայ պատճառ մը չէ որ իր մարտիրոսի կեանքը ապրելով, միշտ գրկուած Եւրոպայի անփառունակ մնալով հանդերձ չի շարունակէ իր փշոտ միտքին չըլլալ միշտ օգտակար: Ատոր համար է որ մեր ուսուցիչներուն կոչում կրնեմ որ անպարբեր չը մնան, գոնէ հետեւին հետեւին Բարիքի արուեստաճանդէսին մէջ արժարժեքներ, քըննունելիք մը կրթական հարցերուն, եւ մասնաւորապէս Ալեքս. Պուրժուարի իր վարդապետութեան, իր բարոյական դաստիարակութեան Սոյիսարիզի մասին խօսելիք ճանրուն:

Պահ մը առաջ, հայաձինջ ծրագրով ընդունուած Ձէրին, Մշտ գաղտնի մէջէն անցնելով, իր աչքով ամէն բան տեսաւ ու համոզուեցաւ թէ, հայ ժողովուրդը չէ ապստամբած, այլ իր գոյութիւնը պահպանելու համար ինքզինք պաշարուած վիճակի է մտնած, այդ անկ ճգնաժամէն ազատուելու յոյսով: Մուշ իջնելուն պէս, հայոց ստաշնորդը՝ իր ներկայութեան կոչելով բոլոր անց ու դարձի մասին բացատրութիւն պահանջեց: Առաջնորդի կողմէն, խիստ աղքատ եւ կորուստի ձեւով բոլոր մը տրուեցաւ թէ՛ ամիսըն աչորս հայ ժողովուրդը Սուլթանի հովանաւորութեան

Գարիքի ի վեր հայ ժողովուրդը ապրած լլլալով արեւելեան քոնակութեան մը, կամայական իշխանութեան մը սակ եւ ամէն կողմէ միշտ հարստահարուած, խոշտանգուած կեանք մը վարելով վաղուց իր մէջ մեղուցած, կորսնցուցած է համայնական, համերաշխական զգացումները. բայց ատոր համար ինք մեղաւոր չէ, իր ապրած կեանքը, իր միջավայրը զինքը այդպէս ըրած են: Աւէն հայ իր նախար գլխուն ճարը նայելու, իր եւ իրեններուն կեանքն ու պատիւը պահպանելու, ապահովելու մտաւորութեամբ միայն սոցորուած, կրցած է ըլլալ ընտանիքի լուսհայր մը, բայց ոչ համայնքի մը, հասարակութեան մը, ազգի մը լուսանկար:

Եւ այս վերջի ասարիներու ճգնաժամի միջոցին, իր ծոցին մէջ բուռն ահնջ մը, սուրբ եւ անուշ հաւատք մը սնուցած պահուն իսկ, երբ իր վիճակի պիտակութիւնը ամէն առնէլ աւելի ունենալով պէտք էր համերաշխական ոգիով մը, միասիրտ եւ միակամ փարկը սուրբ գործին, նուիրուէր իր առաջդրած վեհ պատակին, անիկայ սրբան թերեւտուութիւն, որքան անձնասիրութիւն եւ նոյնիսկ որքան դասալքութիւն ու դաւաճանութիւն ցոյց տուաւ, իրաւ է թէ այդ ամէնը մեղ յուսահատութեան փրկող հերոսութիւններու, անձնագոհութեանց եւ հասարակական անուս գործունէութիւններու քով:

Դժուար է մէկէն պրծիլ, ազատուիլ դարերու ընթացքին մէջ արժատացած եւ սերունդէ սերունդ ժառանգական դարձած ունակութիւններէն, զգացումներէն ու սովորութիւններէն, բայց եւ այնպէս պէտք է, աշխարհի երեսէն անդաճ կորստելու սպառնալիքով անհրաժեշտ է որ մեր փոստած միջավայրի ինքնին քայքայուող կապանքները խսկաւ թողուք եւ ժամ առաջ յարմար ինք այն օրէնքներուն, այն պահանջներուն սրտնցնով ներկայիս մէջ կապրին ազգերը եւ որոնց շնորհիւ միութիւն ուժ եւ կեանք ունին ժողովուրդները. Երբ մեր ապրելու պայմաններն իր փոխուած են, երբ մեր ներկայ կեանքն իսկ մեզ համայնական համարաշխարհային զգացումներ կրնանք չէլ, դաստիարակութեան պարագն է, վարժարանին պաշտօնն է մանուկները կեանքի հոսանքին հակառակ ուղղութեամբ չի կրթել: Բարձրովին՝ անսակեան եւ նոյնիսկ քնազանդական սկզբունքներու վրայ

ներքեւ հանդիստ ազրած է. եւ իր հպատակական հաւատարմութիւնն լիովին կատարած է, կը կատարէ եւ պիտի կատարէ, եւ երբէք հայոցս կողմանէ այդ տեսակ անհատարմական շարժումներ ծագում տած ուղուրս եկած չեն, այլ կատարութեան վերջը քրտայ հեռ համաձայնած, այդ դաստիարակական խողերն դուրս բերին, հայ ժողովուրդը Սուլթանի աչքէն հանելու համար, եւ այսպիսով չնչին եւ աննշան խնդիր մը, թէ կտաւ վարութեան եւ թէ հայ ժողովուրդեան վրայ շատ սուղի նստեցուցին, կրկին սկզբնապատճառ քերտերն ըլլալով, որով այդ հարցը աւելի կը ծանրանայ կատարութեան վրայ, քան թէ իմ եւ իմ ժողովուրդեան, ուրեմն ինքն կտաւ վարութեան թիւր թիւր ու այդ խնդիրը լուսարանէ, եւ յոյս տայ թէ՛ ո՞րանէլ քերտ մը սպաննուեցաւ, կամ թէ՛ ո՞ր քերտի գիւղը աւարի սուրն, այնինչ, այս 40 սուրբ

հիմունած դաստիարակութիւն մը կեղծ է եւ վատակար: Կեանքը, իրական ընկերական կեանքը երբէք անտեսելու չէ եւ յարմարուելու է այն գիտական, ընկերական յիշաչրման ոգիին որով ժողովուրդ մը, ազգ մը եւ նոյնիսկ ամբողջ քաղաքակրթ մարդկութիւնը սոցորուած կրկայ որոշ ժամանակամիջոցի մը մէջ:

«Մարդ քաղաքական կամ ընկերական կեանքով ապրող կենդանի մըն էր, ըսած է Արիստոտել եւ շատ իրաւաբանք ունի: Արդարեւ մարդ այն անուն միայն զօրաւոր է երբ իր նմաններուն հետ միացած, ընկերակցած է: Բնութեան նուաճումը, ճարտարագիտութեան ու գիտութիւնները եւ բոլոր այն բաները որոնք կեանքը նուազ դառն եւ նուազ տածանելի կրնեն, արգիւնք են համայնական ջգտքերու, մարդերու միացած ուժով: Արարածներու ամենաթշուարը, ամենաակարբ իր նմաններէն բոլորովին պնջատուած, մեկուսացած մարդն է: Վայ մեռակուցին (voe soli) որ բանաստեղծին բացատրութեան համեմատ մերկ նետուած արարած մըն է իրկ հոգին վրայ ամէն տեսակ դժբանքի եւ տառապանքներու ենթակայ: Մարդ ոչ միայն չի կրնար ապրիլ, բարեբաղդարար չի կրնար ենթադրուիլ իսկ ընկերութիւնն զորս: Առանց իր ժամանակակիցներու եւ ծնունդէն ստաջ ապրած սերունդներու աշխատութեան մարդ անբնակ կրկի մը մէջ ինկած Բոպէնսոն մըն է որ իր գոյութեանը կարենալ պահպանելու համար գոնէ կապիկներու եւ ուրիշ անասուններու, ընկերակցութեան եւ օժանդակութեան կրկարաի: Ուրեմն շատ իրաւամբ Միլլի Բրիւտով իր սքանչելի երոզիւս մէջ ըսած է «Nule ne peut se santer de se passer des hommes»:

Այս ճշմարտութիւնները այնքան բացորոշ են որ զանոնք ապացուցանելու երբէք չը պիտի ջանամ, ոչ ալ պիտի ուզեմ մարդուս հոգեբանութեանը ընդգծել անոր այս կամ այն բնութեան եւ յակումներուն մէջ գրտնել: Նշանները համերաշխական զգացումներն են, այն զգացումներն որ մարդ պարերու ընթացքին մէջ իր ապրած ընկերական կեանքով անդիտակցորէն ժառանգած է: Իմ նպատակս է ցոյց տալ միայն համերաշխութեան զգացումներն տրամաբանական հետեւանքները եւ նշանակել մանկավար-

մէջ օրակարգի ժողովուրդն աչքէ անցուցէք. եւ հայոցս կրած վատներն, սպաննուածներն, ու աւարի առածներն ինկատի առնելով՝ դժբաղք ձեր փոքր զատեցէք. թէ՛ ո՞վ է յանցաւորը: Այս կնգորոյն բացատրութիւնը եւ մեր արդարաբար սրձագանքը, որ ձեր արդարաբարութեան առջեւ դնելով՝ ձեր ուշադրութիւնը կը հրաւիրենք»:

Ստաշնորդի կողմէն ներկայացուցած ժողովուրդը, Ձէրին աչքէ անցուց զտնալով միութեամբ ինն, անկէց եւս պահանջեց նման օրինակ ժողովուրդ մը, թէ քերտեր ինչ վատներ կրած են հայոցին, եւ ինչ պէտքեր տեղի ունեցած է, քրտայ վատը որ քանի կը հասնի: Միւթէսարիքը այդ տեսակ նախապատրաստած ժողովուրդ մը չունենալով, չէ կրցաւ մե եւ պատասխան մը տալ, որով Ձէրին կատարելապէս այն եղրակացութեան յանդեցաւ թէ՛ հայերը մեղք

ժակուն այն ուղղութիւնը որով մեր տղոց մէջ այդ զգացումը կրնանք զարգացնել, զանոնք այդ զգալաբարին հաւանեցնել որով միայն կունենանք համոզուած եւ իրենց պարտքերուն գիտակից ազգասէրներ ու մարդասէրներ:

ԿԱՐԱՊԵՏ ՊԻՇՆԵԱՆ (Շարունակելի)

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԵՐՔՈՒՄ

Վառնայի 45 թիւ Իրաւունքի մէջ քաղաքիս Ազգ. վարժարանաց Տնօրէն Տ. Վահան Ծահրիմանի մասին պրտած է թէ.

- 1. Ակամեանի տղան սաստիկ գանակոծած է, որուն հետեւանքով տղեկը հիւանդացի, վիրաւորուեր է 10—12 օրէն հազիւ բուժուելու վիճակին հասեր է:
- 2. Աղամեանի մեկ ուրիշ տղուն ալ ակաան կտորեր է իրր թէ:

Պաշտօնապէս կը յայտարարեմ, թէ բացարձակապէս սխալ է սուս են այդ հրատարակութիւնները: Տ. Աղամեանի պղտիկ տղան ծանր յանցանքի մը մէջ զըտնուած ըլլալուն համար՝ Տնօրէնը զանի պատժած է թեթեւ ապտակով մը, բայց երբէք գետակոծած չէ:

Տղան հիւանդացած չէ, եւ նոյն օրն իսկ, կէս օրէն յետոյ վարժարան գտնուած է առանց ո՞ր եւ զժգոհութեան կամ զժուարութեան: Եւ աւելոյն աւ գիտենք որ պատժուելէն քանի մը մը օր առաջ նոյն տղան մարմնամարդի դասերուն մասնակցած չէ առարկելով թէ վերք ունի, զոր իր իսկ խօստովանութեամբ, ստացած է վարժարանէն զորս, իր ծնողաց հետ Մարքովա գաջած ատեն քարերուն վրայ ինչպիսով է: Եւ զոր տղուն հայրը ուղած է Եւհարիմանին երեսակայական հարուածներուն վերագրել: Գալով մեծ տղուն, որուն ակաան իբր թէ կտորեր է, ամէնէին որեւէ մէկ օր պատժուած անգամ չէ Տ. Ծահրիմանէն:

մը չեն ունեցած: Որով խնդրոյն վերահատու ըլլալէ յետոյ, երկու օր ետք Պիթլիս անցաւ, անց հասնելով հեռաբար մը միւթթիւն եւ առաջնորդը իր քով կանչեց:

Այդ խնդրոյն պատասխանատուութիւնը երթալով Բառեֆ փաշայի վրայ կը ծանրանար, եւ կարելի չէր ըլլար իր օձիքն աղատել, քանի որ մէկ կողմէն կատարութիւնը անողին ծախուց էր ենթարկած, իսկ մյւս կողմէն հայոց ալ անողին վատներ էր եղած, իր մէկ հասակ տուած թիւրիմոց հեռաղրով:

Այլուս Ձէրին ամէն բան մէկ կողմ թողրով Բառեֆ փաշայի օձիքն աղատելու ետեւէ եղաւ. ինչ պատգութեանները որ հայոցս շուրջը արձան, բաւական չը համարելով, Ձէրին եւս ուղեց ձգուած թերի մասն ալ ինքն կատարելագործել, Բառեֆին այդ ծանր պատասխանատուութեանն ազատելու, որով նենդ գրութիւն մը առաջնորդին ներկայացուց, ստորա գրել հրամայելով: ՍԱՍՏ ԵՌՈՎԱՆԵՆԵԱՆ (Շարունակելի)

Եւ մեր վարժարաններուն մէջ ակուայ կոտորած չունին ո՛չ Տ. Շահրիմանը, ոչ ալ իր պաշտօնակիրները, ինչպէս վկաներու ստուար մեծամասնութեամբ ստուգուեցաւ դատավարութեան միջոցին, որ տեղի ունեցաւ քանի մը օր առաջ:

Միայն թէ Տ. Աղամեան երկու ամիս առաջ ալ գանգատած է թէ իր տղան գանակոծուած է վարժարանին մէջ:

Հոգաբարձութիւնս այս մասին ալ քննութիւն մը բանալով տեղեկացած է որ, ո՛չ թէ Տ. Շահրիման, այլ երաժիշտ դասատուն թեթեւ ապտակ մը իջեցուցած է, անոր մէկ ծանր յանցանքին համար: Ասկէ դուրս ոչինչ պատահած ունի հակառակ լրագրական անտեղի ազմուկներուն:

Մնամ յարգանք
Ի դիմաց Փ. Պօլսոյ Ազգ. վարժարանաց հոգաբարձութեան Աստենապետ Յ. Մ. ՔԱՆԹԱՐԵԱՆ (ԿՆԻՔ)

Յ. Գ. Մէկ օրինակ ալ զրկուած է նաեւ «Իրաւունք»ին:

ՀԱԼԱՅՈՒՄԸ ՏԱՐԱՅՈՒՄ Է

«Տարազի» թիւ 20ի մէջ կարգացրինք հետեւեալ ուրախալիլուրը:

«Նոր Դար»ին Պեղերբուրգից հաղորդում են, որ այն տեղ հիմնուած է հայոց շարժական ուսումնարան, այսինքն տեղական հայ ընտանիքների համաձայնութեամբ, մայրաքաղաքում գրտնուած մի քանի հայ ուսուցիչներ որոշ օրեր պիտի շրջեն տնէ տուն, յիշեալ ընտանիքների զաւակներին հայոց լեզու եւ կրօնք անուղեւիտ:

Ուրախալի նորութիւն:

Այո՛ շատ ուրախալի նորութիւն: Շուետացիք առաջինները ըլլալով այս գործնական միջոցին եկան, իսկ հայերս պիտի ըլլանք երկրորդը: Մեր ամենէն նուիրական հաստատութիւնները, մեր դպրոցները ուսական դարձելի ծրագրերնուն պէտքեր թալէ վերջ, մեր մանկուոյ սըրտերուն մէջ ազգային զգացումը վառ պահելու համար ուրիշ աւելի յարմար միջոցներու չենք կրնար գիտել քան վերոյիշեալին: Ոչ ոք կրնայ ուրանալ թէ հիմնական պարագաներուն մէջ միայն դպրոցը կրնայ մեր ազգը կանգուն պահել: Ռուս բռնապետութիւնը՝ մոռցած Լօրիս-Մելիքօֆներու, Լազարեաններու, Տ. Առաքելիներու եւն. մատուցած մեծ ծառայութիւնները՝ միշտ կը ճգնի հայերը ուսացնելու ճիւղալիին ծրագրերը ի գլուխ հանել, որովհետեւ իր այժմեան քաղաքականութիւնը այդ կը պահանջէ: Եւ աս իրագործելու համար

չի գլանալ: ամենավատ միջոցներ գործածել: Ինչպէս վերը յիշեցինք, գրաւեց մեր դպրոցները: Եւ հայ մանուկը իր լեզուն պիտի սովորէր, ուր նա իր ազգը պիտի ճանչնար: Մինչեւ իսկ արգիլեց հայուն իր թշուառ եղբոր ձեռք կարկառել, փող, հաց եւ ապաստան տալ թիւրքահայ գաղթականներուն: արգիլեց Ռաֆֆիի գրքերը երկրորդ անգամ տպել տալ, որովհետեւ ատոնք կրնային հայ անհատին ազգային զգացումը բորբոքել, եւ տեղեկներ գեռինչեք պիտի հնարէ: Բայց այս ամենուն մէջ ձերմակ Արշիւն գիււանագէտները մի բան ի նկատի չ'առին. մի առակ, որ պատկանելի հնութիւն մը ունենալ կը թուի, այն է, «Հալածումը տարածում է»: Ռուսները մեր կողմէ կասկած դպրոցները փակեցին, իսկ մեր հղբայրներէն իրաւքանչիւրը պէտք է իր տունը դպրոց մը դարցնէ. անոնք ալ պէտք է Պեղերբուրգի եղբարց օրինակին հետեւին, իրենց նշանաբան ընտրելով «Հալածումը տարածում է»: »

1940

Վերջնականորէ 26 Մայիս

Ն. Ա. Մ. Ա. Կ. Ա. Տ. Ո. Ի. Փ

Պ. Վարազդատ. Ձեր բաց նամակը ուղղուած Ձանկիւրեանին չենք սպազրելու, որովհետեւ «զարկուած ինչպէս լաւ գործ չէ: Որքան կուզէ թող ընկնի այդ խեղճ մարդը: Որո՞ւ հոգը:

Ն. Ա. Մ. Ա. Կ. Ա. Տ. Ո. Ի. Փ

Աղքատախնամ մասնախումբս կը փութայ զրկել Ձեզ ներքակեալ իր վերջին քառամեայ գործունէութեան հաշուեկշիռը խնդրելով որ հաճիք հրատարակել զայն ձեր մօտակայ թիւերէն միոյն մէջ:

Աղքատախնամ հրապարակաւ իր շնորհակալութիւնները կողմէ քաղաքի միջազգային կաթօլիկ հիւանդանոցի Արքայ Տնօրէնութեան որ բարեհաճեցաւ եղած գիմումին վրայ, Աղքատախնամի կողմէ խնամուած հիւանդներուն օրական սակագինը բացառաբար զեղչել 1 1/2 օրէ մէկ լէվի. նոյնպէս իր գոհունակութիւնը կը յայտնէ «ժամանակ» խումբի բնօրէն անդամոց որք րրենց աշխատակցութեամբ քաջալերեցին ցարգ սոյն բարեգործական հաստատութիւնը եւ այսուհետեւ ալ պիտի շարունակեն միշտ ձեռնտու գտնուել անոր: ()

Մնամ յարգանք
Ի դիմաց Աղքատ. մասնախումբի Աստենապետ Ա. Յ. Սրվաճեան Մ. Պ. Ասլաղեան

() Հաշուեցուցակը աւելորդ կը համարինք հրատարակել, որովհետեւ արդէն տեղական թերթի մը մէջ հրատարակուեցաւ: Ծ. Խ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Գերմանական կայսրը սպանեալու հացկերթի մէջ իր ճառովը յայտարարած է որ սովորականօր Գերմանիոյ համար անհրաժեշտ է: Ոչ մէկ մեծ վճիռ չԷ պիտի տրուի առանց Գերմանիոյ եւ առանց Գերմանիոյ կայսեր: Ու այդ նպատակին հասնելու համար ինքը կայսրը ամենամայրայեղ միջոցներու պիտի դիմէ:

Պ. Բրոտրիկ անգլիական երեսփոխանական ժողովի մէջ յայտարարած է որ յուսալի է որ ձաբոն կառավարութիւնը, ինչպէս Չինաստանի ամենամօտիկ պեթիւն ամենակարճ միջոցի մէջ մեծ քանակութեամբ զօրք պիտի թափէ Չինաստան. ըստ երեւոյթիւն եւ ոչ մէկ պետութիւն հակառակ է ատոր: Անգլիան ամէն միջոց գործ պիտի դնէ որ պետութիւններու մէջ համաձայնութիւն լինի եւ պիտի ամէն կերպ շանայ խուսափիլ ամէն մի պատահարէ որ կրնայ առաջ բերել Չինաստանի բաժանումը, որը մեծ դժբախտութիւն մը պիտի ըլլայ:

Լօնտօնի թերթերը կը հաղորդեն թէ՛ ըստ Չինական աղբիւրներէ եկած տեղեկութիւններու ոչ մէկ եւրոպացի կենդանի չը պիտի թողուն Բէքինի մէջ: Անգլիոյ դեսպանատան վիճակը սարսափելի է, լեցուն է հիւանդներով եւ վիրաւորեալներով:

Շանկայէն կը հեռագրեն որ օտար հիւպատոսները նիստ են ունեցեր. Եանկ-Յէ նահանգի չին փոխարքանները ամէնքն ալ որոշած են խաղաղութիւնը պահպանել: Միմիայն Յի-Սեանկի փոխարքան թշնամական զգացմունքներ կարտայայտէ դէպի օտարականները: Շանկայի մէջ ամէն բան խաղաղ է:

Չիֆուէն Լօնտօն կը հեռագրեն թէ ռուս եւ անգլիացի ամիրալները առ այժմ յարձակում չը պիտի գործեն Բէքինի վրայ, որովհետեւ միջազգային չօրքերու թիւը 20,000 հոգիի կը հասնի, մինչդեռ չիները 140,000 են ժողուած թիւէնցիւնի եւ Բէքինի մէջ տկլերը:

Նանքինի փոխարքան դարբեր է զօրքը սպառազինելէ որպէս զի ատով սպացուցանէ թէ ինքը համաձայն է եւրոպական պետութիւններու հետ:

Թերթերը Շանկայէն կը հաղորդեն որ իշխան Թուս հրամայած է չին նաւատորմը ժողուեն Հարաւի կողմերը եւ յարձակուին Շանկայի օտար նաւերուն վրայ: Հարաւային նահանգներու փոխարքանները այդ նահանգները ինքնուրոյն են հռչակուած, մինչեւ որ Բէքինի մէջ հաստատուի օրինաւոր կառավարութիւնը: Լուր տարածուած է թէ չինաց

ոց կայսրը եւ կայսրուհին թուս նաւորուած են:

Լօնտօնի թերթերը Շանկայէն կը հաղորդեն որ կայսրը թուսնաւորուած է օրիւմով, Թուս իշխանի ստիպումով: Նոյնպէս եւ այլի կայսրուհին բայց դեռ կենդանի է եւ խենթացած:

Ա. Ձ. Դ

Կը փութանք ծանուցանել թէ քիչ ժամանակէն պիտի հրատարակուի Հասարակական Ծրագրի, որ ուշացած է. Ծրագրի հետ միացած:

Այդ զոյգ թիւին մէջ, ամբողջ պրակ մը յատկացուած է Փարիզի Արուեստահանդէսին, որուն գլխաւոր շէնքերէն եւ տեսաներէն 12 շքեղ նկարներ գեղեցուած են հոն:

Ուրախութեամբ կը յայտարարենք նաեւ որ յաջողած ենք Փարիզի մէջ բանալ Աեպիսկոպոս Ծարաւն մը, ուր Ա. պիտի սպազրուի «գիտական եւ գրական Հանդէս» եւ Բ պիտի կատարուին հայերէն, Փրանսերէն եւ օտար լեզուներով ամէն տեսակ տպարանական աշխատութիւններ՝ խիստ չափաւոր գիներով:

Կը խնդրենք, հաճեցէ՛ք հրատարակել այս տեղեկութիւնները, որոնք հայ հասարակութեան պիտի ներշնչեն՝ ամէն բանէ առաջ՝ վստահութիւն դէպի Հասարակական յարատեւ հրատարակութիւնը:

Հնդուներէք մեր յարգանքները
Տնօրէն-Խմբագիրներ
Մ. Պաղասաւրեան եւ Յովն. Շաւարշ

Ա. Ձ. Դ

Կը փութանք ծանուցանել թուս խմբագրութեանս գլխող հայ որբերու յատկացեալ Բացառիկ Թերթի բաժանորդներուն որ այն Թերթի տպագրութիւնը աւարտած չէ դեռ. երբ աւարտի կը ծանուցանենք Բացառիկով:

Բացառիկ

Հ. Ս. ԷՓՐԻԿԵԱՆ

Բնաշխարհիկ քառասուն 1900 վեներտիկ. Ա. Ազար, Լոյս տեսած է այս ընդարձակ գործին առաջին քսանթերթեան պրակն, որ կը բաղկանայ 160 երկսիւն էջերէ եւ զարդաբարձ է 80ի չափ խնամատիպ պատկերներով: Կը պարունակէ մեր երկրի նահանգաց, գաւառներու, քաղաքներու, վանքերու, գիւղերու, գետերու, լեռներու եւ այլ նշանաւոր տեղեկաց վրայ, աշխարհագրական, պատմական, հնախօսական եւ այլ կարեւոր օգտակար տեղեկութիւններ: Առաջին պրակի գինն է ճանապարհի ծախքով 3 ֆրանք կանխիկ, Հասցէ՛

direction de l'Imprimerie arménienne
St. Lazare Vesnie

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Բարիկի մէջ մտերս նոր բացուած է հայկական ընթերցարան մը որ կը գտնուին 30է աւելի օտար եւ հայ լեզուով լրագրերներ:

Հասցէ՛
Հայկական ընթերցարան
Բամբաներ Բրեմէն փողոց թիւ 9
Բարիկ

Печатница „Взаимность“ Варна